ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Էլ.փոստ kotayk@mta.gov.am

----------N----------

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ի հարցման, տեղեկացնում եմ, որ Կոտայքի մարզպետարանը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն. այդ պարտականությունը դրված է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վրա:

Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ընդհանուր բաժնի պետի կողմից տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ ըստ իր կողմից ներկայացված հարցումների ձևաչափի՝ ժամանակին և լիարժեք:

Վերոնշյալ վիճակագրությունը տարին առնվազն մեկ անգամ հրապարակվում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքէջի «Դիմել մեզ և տեղեկատվության ազատություն» բաժնի «Դիմումների և տեղեկատվական հարցումների վիճակագրություն» ենթաբաժնում՝ http://kotayk.mtad.am/reviewofapplications/:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ Կոտայքի մարզպետի որոշմամբ, մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ինգա Հայրիյանն է (մարզպետի համապատասխան որոշման պատճենը՝ կից առդիրում):

Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը մասնակցել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված՝ «Տեղեկակտվության ազատությունը կառավարման համակարգում» (2021 թվականի փետրվարի 18) և «Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար» (2021 թվականի ապրիլի 21-23) թեմաներով երկու դասընթացների:

Առդիր՝ 2 էջ:

Recoverable Signature

X

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Signed by: SAHAKYAN AHARON 4003800109

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
0223 2 73 37